ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԾԱԿՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հեռ. (0262) 6-12-09
№ 126 -Ե
23 դեկտեմբերի 2014թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐՆ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Կից ուղարկում ենք Ծակքարի համայնքի ավագանու 15.12.2014թ. թիվ 10 նիստի N. 28-33 որոշումները:

Ծակքարի համայնքի ղեկավար՝ Գ. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԾԱԿՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

15.12.. 2014թ.

Հեռ. (0262) 6-12-09 գ. Ծակքար

ՈՐՈՇՈՒՄ -- 28

Ղեկավարվելով ՀՀ ,,ՏԻՄ,, օրենքի 33 հոդվածի 4- րդ կետով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմող ընկերոջ ընտանիքը գտնվում է սոցիալապես ծանր վիճակում, ունի բուժման կարիք , ուստի համայնքի բյուջեի սոց. պաշտպանության ոլորտի 4729 հոդվածից որպես օգնություն 100.000 (մեկ հարյուր հազար) դրամ հատկացնել Շողիկ Կամոյի Այվազյանին:
Ավագանու կողմ - 4, դեմ -0, ձեռնպահ -0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:
Որոշման պահանջի կատարումը վերապահել առաջատար մասնագետ Տ. Աքոյանին:
Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

1. Մ. Ալեքսանյան
2. Հ. Այվազյան
3. Մ. Հակոբյան
4. Ա. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ -- 29

Ղեկավարվելով ՀՀ ,,ՏԻՄ,, օրենքի 33 հոդվածի 4- րդ կետով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմող ընկերոջ ընտանիքը գտնվում է սոցիալապես ծանր վիճակում, ունի բուժման կարիք , ուստի համայնքի բյուջեի սոց. պաշտպանության ոլորտի 4729 հոդվածից որպես օգնություն 40.000 (քառասուն հազար) դրամ հատկացնել Սուսաննա Վանիկի Հակոբյանին:
Ավագանու կողմ - 4, դեմ -0, ձեռնպահ -0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:
Որոշման պահանջի կատարումը վերապահել առաջատար մասնագետ Տ. Աքոյանին:
Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

1. Մ. Ալեքսանյան
2. Հ. Այվազյան
3. Մ. Հակոբյան
4. Ա. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ -- 30

Ղեկավարվելով ՀՀ ,,ՏԻՄ,, օրենքի 33 հոդվածի 4- րդ կետով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմող ընկերոջ ընտանիքը գտնվում է սոցիալապես ծանր վիճակում, ունի բուժման կարիք , ուստի համայնքի բյուջեի սոց. պաշտպանության ոլորտի 4729 հոդվածից որպես օգնություն 120.000 (մեկ հարյուր քսան հազար) դրամ հատկացնել Գևորգ Արթուրի Համբարձումյանին:
Ավագանու կողմ - 4, դեմ -0, ձեռնպահ -0 քվեարկությամբ որոշումն ընդունվեց:
Որոշման պահանջի կատարումը վերապահել առաջատար մասնագետ Տ. Աքոյանին:
Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

1. Մ. Ալեքսանյան
2. Հ. Այվազյան
3. Մ. Հակոբյան

4. Ա. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ – 31

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար սահմանել տեղական տուրք հիմնական օբյեկտների համար՝
   ա) մինչև 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ. ընդ. մակերես ունեցող և հասարակական ու արտադրական նշանակություն ունեցող օբյեկտների համար՝ - 4.000 դրամ,
   բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
   բա) 201-500քմ. ընհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 6.000 դրամ,
   բբ) 501- 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 10.000 դրամ
   բգ) 1001-ից ավել քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 15.000 դրամ
   Ոչ հիմնական շինություններ տեղադրելու համար՝
   գ) մինչև 20 քմ. ընհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 500 դրամ,
   դ) 20 և ավել քմ. ընհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ – 1.000 դրամ,
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական, այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման աշխատանքների համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարապետաշինարարական նախագծով՝
   ա) չի նախատեսում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 500 դրամ,
   բ) բացի օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում է նաև սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմեր.
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար՝ 1,500 դրամ,
4. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրք սահմանել՝
   ա) Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 1.000 դրամ,
   բ) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 1.500 դրամ:
5. Համայնքի տարածքում
   ա) Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար՝ սահմանել տեղական տուրք յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ,
   բ) Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում վաճառքի թույլտվության համար տեղական տուրք սահմանել ընթացիկ տարվա համար 150.000 դրամ:
6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի կազմակերպման օբյեկտները աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրք սահմանել ընթացիկ տարվա համար՝
   ա) առևտրի օբյեկտների համար՝ 25.000 դրամ,
   բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ:
7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու համար մեկ քմ-ի տեղական տուրքը սահմանել 500 դրամ:
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու տուրքը սահմանել 1.000 դրամ:

Ավագանու կողմ -4, դեմ-0, ձեռնպահ-0, որոշումն ընդունվեց:

Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

1. Մ. Ալեքսանյան

2. Հ. Այվազյան
3. Մ. Հակոբյան
4. Ա. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ – 32

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին կետի՝ հաստատել Ծակքար համայնքի 2015թվականի բյուջեի մուտքային և ծախսային մասի նախագիծը ըստ ներքոհիշյալ դասակարգման.

Ա. Վարչական բյուջե ---------------------------------------------------- 56098.1
Որից՝ 1. Հարկեր և տուրքեր ---------------------------------------------- 12913.6
ա) Հողի հարկ ------------------------------------------------------------ 3393.6
ա)Գույքահարկ փոխադրամիջոցների ---------------------------------- 9340.0
ա)Տեղական տուրքեր ---------------------------------------------------- 180.0
2. Այլ եկամուտներ ------------------------------------------------------ 3155.0
Վարձակալության վճարներ --------------------------------------- 1260.0
3. Պաշտոնական դրամաշնորհներ ------------------------------------ 41924.5
ա)Պետ. Բյուջեից ֆինանսական համահարթեցման դոտացիա -- 41924.5

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Ա. Ծախսերի գծով ------------------------------------------------------ 56098.1
ա)Համայնքի ապարատի պահպանման ծախսեր ------------------ 39466.0
ա)Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ------------- 220.0
ա) Մշակույթ ----------------------------------------------------------- 6332.0
ա) Սոցիալական պաշտպանություն ------------------------------------ - 28.00
ա) Շրջակա միջավայրի պաշտպանություն (աղբահանում) ------ 980.0
ա)Տնտեսական հարաբերություններ ---------------------------- 2460.0
ա) Կոմունալ ծառայություններ ------------------------------------- 1800.0
ա) Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդ ------------------------- 2040.1

Ավագանու կողմ -4, դեմ-0, ձեռնպահ-0, որոշումն ընդունվեց:
Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՈՐՈՇՈՒՄ -- 33

Ղեկավարվելով ՀՀ «ՏԻՄ» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով համայնքին օգնության նպատակով տրված առվույտի (383 կգ.) և կորնգանի (424 կգ.) սերմացուները թողնել ի պահ գյուղապետարանի տրամադրության տակ, գարնանը կարիքավոր ընտանիքներին տրամադրելու համար:

1. Մ. Ալեքսանյան
2. Հ. Այվազյան
3. Մ. Հակոբյան
4. Ա. Խաչատրյան .

Ծակքար համայնքի ղեկավար՝ Գ. Ավետիսյան

Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Խաչատրյան